ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA

A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս (37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

"24" 03 2015թ. № 01-14/120

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)" հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ԱԱԳԼ-ՇՀԱՊՁԲ- 15-11/1:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել "Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)" հիմնադրամ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների 2 հասցեով, Վարչական մասնաշենք, 2-րդ հարկ, Ա. Դերձակյանին (հեռ. 010 34 23 74), մինչև 2015թ. ապրիլի 3-ը, ժամը 15:30-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն "Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)" հիմնադրամ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների 2 հասցեում, Վարչական մասնաշենքում, 2015թ. ապրիլի 3-ին, ժամը 15:30-ին:

Գնման առարկա է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)" հիմնադրամի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերումը, որը կազմված է 3 չափաբաժնից: Ապրանքի գնման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն Ա. Չիլինգարյան

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՐ FOR DOCUMENTS 01202364 ДЛЯ ДОКУМЕНТОВ